

ԳԻՏԱ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ՝ ՆՎԻՐՎԱԾ
ԿՈՎԿԱՍՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՅ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԱՐՅԵՐԻՆ**

(սեպտեմբերի 8-13, 2003 թ.)

Արևելյան Եկեղեցիների իրավունքը հեղափոխության ընկերակցությունը, որը գործում է 1969 թ. սեպտեմբերից Վիեննայում, հսկայածավալ գործունեություն է ծավալել Քրիստոնեական Արևելքի Եկեղեցիների իրավունքի հեղափոխության բնագավառում: Այսօր ընկերակցության նախագահն է բյուզանդական իրավունքի նշանավոր պետաբան և բնագրագետ, պրոֆ. Մայիոս Տրոյանոսը: Ընկերակցության ղեկավար մարմնում մեկ պատմամայակից ավելի ընդգրկված է նաև Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը: Այս հաստատության անդամներն են իրավագետներ, կառնազետներ, ծխազետներ, Եկեղեցու պատմաբաններ, որոնք իրենց հեղափոխությունների կենտրոնում են պահում Արևելյան Եկեղեցիների կանոնադիպությունը:

Ընկերակցությունը երկու փարին մեկ անգամ Արևելյան Եկեղեցու կանոնադիպության հետ առնչվող հարցերի շուրջ կոնֆերանս է հրավիրում որևէ երկրում, ուր քննվում են գիտնականներին և Արևելյան Եկեղեցիներին և վերջիններիս պատմության հեղափոխողներին միասնադու առավել կարևոր համարվող հարցերը: Այս փարի ընկերակցության ԺՋ կոնֆերանսը փնդի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի հետ համարելով՝ Ծաղկածորում (Կեչառիս) ու Դիլիջանում, և նվիրվեց Կովկասյան Եկեղեցիներին, նրանց իրավունքին: Ընկերակցության անդամներից կոնֆերանսին ժամանել էր ընկերակցության 35 անդամ, նաև Ղազախստանից ու այլևայլ երկրներից մասնագետներ, որոնք հանդես եկան համապատասխան զեկուցումներով:

Ծաղկածորի գիտաժողովը բացվեց սեպտեմբերի 8-ի երեկոյան, Կեչառիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում փրված գոհաբանական աղոթքով: Բացման խոսքով ներկաներին դիմեց ընկերակցության նախագահ, պրոֆ. Ս. Տրոյանոսը: Օրինության խոսք ասաց Ն.Ս.Օ. Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ անդրադառնալով կրոնական ու լորպում իրավական սկզբունքների հիմնադրություններին՝ խղճի և դավանանքի զգալության, կրոնների միջև հանդուրժողականության, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փարանջափման խնդիրներին շեշտելով. «Այլադավանի հանդեպ հանդուրժողականությունը հասարակական նորմ չպիպի դարձնի ուխտադրությունն ու դավանափոխությունը»: Ներածական խոսք ասաց Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը:

Գիտաժողովում քննարկվեցին փարաբնույթ հարցեր: Նիստերի նախագահներն էին լուսաբանվող խնդիրների մասնագետներ, ընկերակցության անդամներ, Արևելյան քրիստո-

նեության պարմության և կանոնագիտության հանրաճանաչ մասնագետներ՝ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը, պրոֆեսորներ Նուբերյ Կառլինյանը (Գերմանիա), Կոնստանտինոս Պիցակիսը, Ռիչարդ Պոպը, Վարգեզ Կոլոթառան, Ժորժ Նեղունգարը և Ռադիու Պոեդան: Հարց ու պատասխանների ժամանակ եռանդուն մասնակցություն բերեց Կովկասում Վարդիկանի դեսպան և պապական նվիրակ արքեպս. Կլաուդիո Գուջերուպին:

Նախաշրջանի առաջին նիստը նվիրված էր Այսրկովկասյան Եկեղեցիների քրիստոնեացման և հնագույն պարմության սկզբնաղբյուրներին, ուր առաջին զեկուցումն ընթերցեց պրոֆ. Միշել վան Էսթրոկը: Բելգիացի գիտնականն իր զեկուցման մեջ անդրադարձավ Հայաստանում և Վրաստանում քրիստոնեության ընդունման հնագույն սկզբնաղբյուրներին՝ Ազաթանգեղոսի պարմությանն ու Վրաց դարձի պարմությանը, թվագրեց Հայոց պարմության վաղ շրջանի մի շարք իրադարձություններ (օր.՝ «Կանոնագիրը Հայոցից» հայտնի Նեոկեսարիայի ժողովը 314-319 թթ. միջև՝ ենթադրելով, որ այս ժողովը կարող էր հրավիրված լինել Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության առիթով): Նեդինակը Դ դարի առաջին կիսամյակով է թվագրում նաև վրացիների և աղվանների դարձը, համեմատում է վրաց թագավոր Միրիանին և Հայոց թագավոր Տրդատին, անդրադառնում է աղվան քրիստոնյաներից միակ պահպանված ձեռագրին՝ Սինայի Ս. Կապարիեն վանքում գտնված կրկնագրին:

Հայոց եկեղեցական կանոնների առաջին ժողովածուների կազմման ու խմբագրության պարմությանն էր նվիրված պ.գ.դ. Ա. Բոգոյանի զեկուցումը, որի ընթացքում կարևորվեց Շահապիվանի ժողովի (444 թ.) կանոնախմբի նշանակությունը, նրանում հավասարված վկայություններով հաստատելով այն կարծիքը, որ ժողովական հայրերի ձեռքին եղել է Հայոց Կանոնագրի նախնական խմբագրություններից մեկը: Մինչև Հովհան Օձնեցու (կթղ. 717-728 թթ.) կողմից «Կանոնագիրը Հայոց»-ի բնագրի վերջնական խմբագրումը, հիշատակվեց, որ հայագիտության մեջ խոսվում է այդ բնագրի խմբագրման ևս երկու փորձի մասին: Նեդինակը մասնակիցների ուշադրությունը հրավիրելով «Կանոնագիրը Հայոց»-ում տեղ գրած 24 կանոնախմբերի ժողովածուի վրա, փորձեց անդրադառնալ նաև Հայաստանում արմատներ ձգած «Կանոնագիրը Հայոց»-ի հետ գուցահեռաբար զարգացող բյուզանդական կանոնագրերին, առանց որոնց պարմության իմացության անհնարին է կարարյալ պարկերացում կազմել կանոնական ժողովածուների զարգացման նախնական փուլերի մասին: Այս նույն մտահոգությամբ կոչ արվեց նաև համեմատական նյութեր փնտրել ասորի հակոբիկ, Մարոնիսի և Մելկիս Եկեղեցիների մարտնագրությունների մեջ:

Հայոց Եկեղեցում կանոնական հետազոտությունների և եկեղեցական իրավունքի զարգացման հարցերին էր նվիրված գիտաժողովի հաջորդ նիստը: Այստեղ «Հայ Առաքելական Եկեղեցու իրավունքի զարգացումը ԺԹ-Ի դարերում» վերնագրով զեկուցում կարդաց Տ. Եզնիկ եպս. Պեարոսյանը: Սրբազանի աշխատանքը նվիրված էր նշված ժամանակաշրջանում Հայ Եկեղեցու գործունեությունը կարգավորող հիմնական օրենքներին. Օսմանյան կայսրության մեջ գործող Ազգային սահմանադրությանը և Ռուսական կայսրության ներսում Հայ Եկեղեցու իրավական փնտրող կարգավորող Պոլոժենիին: Նեդինակը նաև անդրադարձավ եկեղեցական իրավունքի տեսանկյունից կարևոր ժողովներին և հետազոտություններին:

Հայ-Կաթողիկե Եկեղեցու ներկայացուցիչ Յորգե Յիզերիմյանը ներկայացրեց «Իրավունքի զարգացումը Հայ-Կաթողիկե Եկեղեցում ԺԹ-Ի դարերում» զեկուցումը: Խոսելով Կաթողիկե Եկեղեցում գործածության մեջ դրված «Արևելյան Եկեղեցիների կանոնագրքին», զեկուցողն անդրադարձավ 1929-1990 թթ. այդ գործի ստեղծմանը հայ-կաթողիկե հոգևորականների (հ. Կարապետ Ամարունի, հ. Վարդան Թեքեյան, հ. Ներսես Սեթյան և այլք) մասնակցությունը օգտագործված սկզբնաղբյուրներին:

Մեծ հետաքրքրությամբ լսվեցին նաև Հայաստանի և Վրաստանի կառավարությունների կրոնական հարցերով խորհրդականների ելույթները: Ռազմիկ Մարկոսյանն ու Թամազ Պապուռաշվիլին ամենայն խորությամբ փորձեցին ներկայացնել երկու երկրներից յուրաքանչյուրում պետության և կրոնական համայնքների միջև ծագող խնդիրները, պետության և Եկեղեցու փոխհարաբերություններին վերաբերող հարցերը:

Գիտաժողովների նիստերից մեկը նվիրված էր «Օրենքի և համապատասխան կանոնների հակասությանը»: Այս բաժնում հետաքրքրաշարժ զեկուցումով հանդես եկավ Հայ Առաքելական Եկեղեցու Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը (տե՛ս էջ 63-80): Ընկերակցության հիմնադիր անդամ, պրոֆ. Կառլ Գերտլը Ֆյուրստի ելույթը նվիրված էր «Օրենքի և համապատասխան կանոնի հակասությունը Կաթոլիկ Եկեղեցու պետականությանը» թեմային, ուր հեղինակն անդրադարձավ Կաթոլիկ Եկեղեցու կանոնագրքի իրավական մի շարք ասպեկտներին:

Կոնֆերանսում հանդես եկավ նաև բյուզանդական իրավունքի սկզբնաղբյուրների և Օրթոդոքս Եկեղեցու կանոնական իրավունքի բնագրագետ և պետաբան, պրոֆ. Ս. Տրոյանտը, որի զեկուցումը վերնագրված էր «Օրենքի և համապատասխան կանոնի հակասությունը Արևելյան Օրթոդոքս Եկեղեցիների ընդհանրությունում և իրավունքի ձևափոխման մասնավոր հարցը Էկումենիկ երկխոսությունում»: Զեկուցման մեջ, ի լրումն մի շարք իրավականական նկատառումների, հեղինակն անդրադարձավ նաև Եկեղեցի և պետական տարածք, եկեղեցական թեմի ամբողջականության հարցերին:

Գիտաժողովի ընթացքում լսվեցին մի շարք գիտական ծրագրերի կատարման ընթացքին նվիրված հաղորդումներ: Դանոնական իրավունքին վերաբերող իրենց ծրագրերը ներկայացրեցին Պաբլո Գեֆանլը («CIC - CCEO-ի ծանոթագրված ժողովածուն»), Իուան Մելրոտֆանը («Օրենքի և CCEO-ի հակասությունը հունական կաթոլիկ ռումինական Եկեղեցում»), Իննա Նալետովան («Տնտեսական գործունեության նոր ձևերը ժամանակակից Ռուս Օրթոդոքս Եկեղեցում») և Պոլ Ալլը («Վերագաղթները և անհրաժեշտությունը կարճ դադարավորության»): Իրար լրացնող երկուական մեծ թեմաներ ներկայացրեցին Թոմաս Նեմեթը, Ռիչարդ Պոպը և Եվա Սյունեկը (1. «Ավստրիական կայսրության ուղղափառ կանոնագետներն ու քաղաքագետները», 2. «Օրենքը և կրոնը Միջին և Արևելյան Եվրոպայում») և Մայիրո Տրոյանտը (1. «Արիստոտելի նոր հրապարակությունը», 2. «Մեկնված քրեական դատաստանագրքեր»):

Կոնֆերանսի նիստերից մեկը նվիրվեց ընկերակցության նախագահ Մայիրո Տրոյանտի գործունեության գիտարկմանը: Զննարկումներից հետո տեղի ունեցավ ընկերակցության Կենտրոնական խորհրդի վերընկալությունը:

Կոնֆերանսի կազմակերպման հարցերը սիրով իրենց վրա էին վերցրել Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պարասխանապու Ս. Եզնիկ եպս. Պնպրոսյանը և Ընկերակցության քարտուղար Եվա Սյունենկը, որոնք մեծ ոգևորությամբ ավարտին հասցրեցին բավականին ընդգրկուն այս գիտաժողովը: Ցավով պիտի արձանագրել, որ ներքոհիշյալ զեկուցողների բացակայության պատճառով Կոնֆերանսի Մոսկվայի համալսարանի պրոֆ. Սերգեյ Կարպովի «Պոնտոսի Ուղղափառ Եկեղեցին (Բյուզանդիան և Տրապիզոնի կայսրությունը)», դր. Վասիլի Կոբախիձեի «Կանոնական իրավունքի զարգացումը Վրաց Օրթոդոքս Եկեղեցում» և օրթոդոքս Ատրիների Հայեպի եպիսկոպոս Ս. Մար Գրիգորիուսի «Իրավունքի ձևափոխությունը Էկումենիկ երկխոսության մեջ Մերձավորարևելյան Օրթոդոքս Եկեղեցիների և Արևելյան Օրթոդոքս Եկեղեցիների միջև. Արևելյան Օրթոդոքս Եկեղեցիների նկատմամբ» զեկուցումները:

Հուսանք, որ կոնֆերանսի նյութերը կհրապարակվեն առանձին հատորով: Ընկերակցության հաջորդ գիտաժողովը ծրագրվեց անցկացնել Իրադիայում և այն նվիրել Եկեղեցու և նրա թեմերի կանոնական սահմաններին վերաբերող փարբեր փեսակետների ըննարկմանը, մի խնդիր, որը հուզում է Օրթոդոքս Եկեղեցու ինքնագլուխ (Ավտոկեֆալ) Աթոռներին և հաճախ բախումնային իրավիճակների պատճառ դառնում նրանց միջև:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պարմական գիտությունների դոկտոր